

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2015թ. հունվարի 14-ին տեղի ունեցած ԳՊՄԻ-ի ֆիզմաթ ֆակուլտետի

ֆակուլտետային խորհրդի թիվ 6 նիստի

Նախագահ՝ ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ Մ. Մարգարյան

Ֆակուլտետային խորհրդի քարտուղար՝ Ա. Սահակյան

Նիստին մասնակցում էին ֆակուլտետային խորհրդի բոլոր անդամները:

Օրակարգ՝

1. Հեռակա համակարգի ուսանողների առաջին կիսամյակի ամփոփիչ քննությունների հարցատոմսերի հաստատում:
2. Հեռակա համակարգի հինգերորդ կուրսի ուսանողների մանկավարժական /արտադրական/, ուսումնական պրակտիկաների վայրերի հաստատումն ըստ ուսանողների:
3. Ինֆորմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի թեկնածության հարցի քննարկում

Զեկուցող՝ ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ Մ. Մարգարյան

1. **Լսեցին՝** Մ. Մարգարյանի հաղորդումն հեռակա համակարգի ուսանողների առաջին կիսամյակի ամփոփիչ քննությունների հարցատոմսերի հաստատման մասին:

Արտահայտվեցին՝ պրոֆեսոր Հ. Դրմեյանը, պրոֆեսոր Ս. Մարգարյանը, դոցենտ Ա. Մանուկյանը:

Որոշեցին- Հաստատել հեռակա համակարգի ուսանողների առաջին կիսամյակի ամփոփիչ քննությունների հարցատոմսերը:

- 2. Լսեցին-** Մ. Մարգարյանի հաղորդումը հեռակա համակարգի հինգերորդ կուրսի ուսանողների մանկավարժական /արտադրական/, ուսումնական պրակտիկաների վայրերը ըստ ուսանողների հաստատման մասին :

Արտահայտվեցին- պրոֆեսոր Հ. Դրմեյանը, պրոֆեսոր Ս. Մարգարյանը, դոցենտ Ա. Մանուկյանը:

Որոշեցին- Հաստատել հեռակա համակարգի հինգերորդ կուրսի ուսանողների մանկավարժական /արտադրական/, ուսումնական պրակտիկաների վայրերի ըստ ուսանողների :

- 3. Լսեցին-** Մ. Մարգարյանի հաղորդումն ինֆորմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի թեկնածության հարցի քննարկման մասին:

Արտահայտվեցին- պրոֆեսոր Հ. Դրմեյանը, պրոֆեսոր Ս. Մարգարյանը, դոցենտ Ա. Մանուկյանը:

Մ. Մարգարյանը նշեց, որ ինֆորմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի միակ թեկնածուն ամբիոնի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Մանուկյանն է:

Ա.Մանուկյանը ներկայացրեց ամբիոնում կատարված աշխատանքները և հետագա զարգացման ուղին:

Որոշեցին- ներկայացնել գիտխորհրդի նիստի քննարկմանը ինֆորմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն վարիչի Ա. Մանուկյանի թեկնածությունը :

Ֆիզմաթ ֆակուլտետային

խորհրդի նախագահ՝

Մ. Մարգարյան

Ֆիզմաթ ֆակուլտետային

խորհրդի քարտուղար՝

Ա. Սահակյան

14.02.2015թ.